Արտավան

Բնակչության թիվը՝ 256

Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում՝ Վայք-Սիսիան խճուղու աջ կողմում, մարզի հարավարևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 37կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 9կմ: Հյուսիսից և արևելքից սահմանակից է Սարավանին, արևելքից՝ Սյունիքի մարզին, հարավ-արևելքից՝ պետական սահմանին /Ադրբեջանի Հանհապետություն/, հարավից և հարավ-արևմուտքից՝ Գոմքին,արևմուտքից՝ Զառիթափին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից՝ Գնդեվազ գյուղական համայնքին:

Գյուղը հիմնադրվել է 10-18-րդ դարերում: Նախկինում այստեղ եղել է հինգ բնակատեղի՝ <<Դամրչլար>> (Դարբնի), <<Մարաթուզ>>, <<Չրախլու>> /Լուսաբեր/, <<Ջուլ>>, <<Դամբարանադաշտ>>: Այս բնակատեղիներից մի քանիսի մասին որոշ տեղեկություններ մեզ են հասել Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերանի) <<Ճանապարհորդական նկատողություններ>> գրքից (1870-ական թվականներ): Մինչև 1949 թվականը գյուղը կոչվել է Ջուլ, որը համապատասխանում է գյուղի այժմյան տարածքին:

Բնակչությունը ռուս- պարսկական պատերազմի տարիներին ներգաղթել է Խոյ, Սալմաստ գավառներից, նախ բնակվել է Ախաչ գյուղում, ապա այնտեղից տեղափոխվելև վերաբնակվել Ջուլում:

Գյուղը վերաբնակեցվել է 1949թ. մարտ ամսից ու վերանվանվել՝ Արտավան:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1860մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է , ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները:

Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: